

ՄոբիԴրամ

Գործնական հարաբերություններ մատակարարների հետ

Գլխավոր Տնօրենի խոսքը

Հարգելի գործընկեր,

ՄոբիԴրամ-ը վերահաստատում է միջազգային չափանիշներին, համընդհանուր ընդունված հակակոռուպցիոն օրենքներին, կարգավորումներին և արդար գործարար մրցակցության էթիկայի նորմերին համահունչ գործունեություն ծավալելու իր վճռականությունը: Մենք ևս մեկ անգամ ընդգծում ենք բիզնեսի բոլոր մակարդակներում, այդ թվում՝ մատակարարների և գործընկերների ընտրության հարցում, թափանցիկ, ազնիվ և պրոֆեսիոնալ գործելու մեր պատրաստակամությունը: ՄոբիԴրամ-ի ջանքերն ուղղված են առողջ բիզնես-մթնոլորտի ձևավորմանը և երկրի սոցիալական միջավայրի բարելավմանն՝ առհասարակ:

Ահա թե ինչու՝ հորդորում ենք Ձեզ միանալ մեզ ցանկացած պայմաններում նշված մոտեցումներին համահունչ բիզնեսի վարման և աշխատելառճի պահպանմանն ուղղված մեր ջանքերին:

Կիմ Ավանեսյան

ՄոբիԴրամ ՓԲԸ Գլխավոր տնօրեն

Նախաբան

ՄոբիԴրամ-ի մատակարարների հետ գործնական հարաբերությունների այս ժողովածուն սահմանում է ՄոբիԴրամ-ի աշխատակիցների վարքագծի ներքին կորպորատիվ չափանիշները և գործընկերների ու արտաքին ներգրավված կողմերի հետ համագործակցության վարքագծի կանոնները: Սույն փաստաթուղթը սահմանում է Ընկերության նվազագույն չափանիշները և պահանջները՝ խթանելու արդար և էթիկական գործնական վարքագիծ և կանխելու բռնությունը:

Էթիկայի կանոնները սահմանում են հետևյալը՝

- ՄոբիԴրամ-ը չի կիրառում երեխայի անօրինական աշխատանք կամ պարտադրված աշխատանք և չի ընդունում դրա կիրառումը:
- ՄոբիԴրամ-ում խիստ արգելվում է պաշտոնի չարաշահումը անձնական շահերի համար:
- ՄոբիԴրամ-ը առաջնորդվում է հակակոռուպցիոն օրենսդրությամբ ներառյալ ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրությունը, ԱՄՆ հակակոռուպցիոն օրենսդրությունը, Միացյալ Թագավորության UK Bribery Act 2010, ինչպես նաև այն տարածքների օրենսդրությունը, որտեղ Ընկերությունը ծավալում է իր գործունեությունը:
- ՄոբիԴրամ-ում մաքսային կամ հարկային օրենքներին հակասող որևէ գործողություն խիստ արգելվում է:
- ՄոբիԴրամ-ը հետևում է մտքի սեփականության իրավունքի և այլ իրավունքներ կրողների պաշտպանության նորմերին:
- ՄոբիԴրամ-ը հետևում է գործնական էթիկայի կանոններին գործընկերների հետ գործնական հաղորդակցման բոլոր ոլորտներում:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) հասարակության և շրջակա միջավայրի վրա ընկերության թափանցիկ և էթիկական նորմերի համաձայն վարքագծին համապատասխանող որոշումների և գործողությունների ազդեցության համար վերջինիս պատասխանատվությունն է: Մեր հիմնական նպատակն է բարելավել կյանքի որակը և մարդու և հասարակության անվտանգությունը նորարարությունների զարգացման և մեր հաճախորդներին ծառայությունների լայն տեսականու տրամադրման միջոցով: Մենք պատասխանատվություն ենք կրում մեր գործողությունների համար, և հավատում ենք, որ դա է ընկերության կայուն զարգացման երաշխիքը:

ՄոբիԴրամը պատասխանատու է հասարակության, սպառողների, բաժնետերերի, իր աշխատակիցների, պետության, գործընկերների և մատակարարների հայտերի համար:

ԿՄՊ ուղորտում ՄոբիԴրամը գործունեությունը ծավալվում է հետևյալ ուղղություններով.

- հաճախորդների կյանքի որակի բարելավում,
- աշխատակիցների մասին հոգում և նրանց գիտելիքների զարգացում,
- բիզնեսի պատասխանատու վարում,
- տեղեկատվական անվտանգություն և տվյալների պաշտպանություն

Աշխատանքային միջավայր

Ընկերությունում խիստ արգելվում են ոտնձգությունները, ներառյալ ֆիզիկական կամ սեռական բնույթի ակնարկները ինչպես նաև հետապնդումը, որոնք խոչընդոտում են աշխատանքը կամ աշխատավայրում առաջացնում են վախի, թշնամության և լարվածության մթնոլորտ:

ՄոբիԴրամ-ը պարտավորվում է ապահովել անվտանգ աշխատանքային պայմաններ իր աշխատակիցների և ՄոբիԴրամ-ի տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի համար:

Օրենքների, կանոնների և կանոնակարգերի համապատասխանություն

ՄոբիԴրամ-ում արգելվում է իրականացնել այնպիսի գործողություն կամ դրդել երրորդ անձանց այնպիսի գործողության, որը կարող է խախտել օրենքները, իրավական ակտերը, ինչպես նաև Ընկերության ներքին ընթացակարգերն ու կանոնակարգերը: Անօրինական գործողություններ են համարվում հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների խախտումը, մտավոր սեփականության նորմերի խախտումը, ապրանքանիշի, կոմերցիոն գաղտնիքի, տեղեկատվության անվտանգության և անձնական տվյալների մասին գաղտնիության կանոնների խախտումը, ներքին ինֆորմացիան այլ անձանց փոխանցելու մասին անօրինական համաձայնագրի կնքումը, քաղաքական կուսակցություններին, կառավարական մարմիններին կամ այլ Ընկերություններին անօրինական

փոխանցումների իրականացումը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումը, շրջակա միջավայրին վնաս պատճառող գործողությունը, աշխատանքի պայմանների և տեխնիկական անվտանգության կանոնների խախտումը, սխալ կամ կեղծված ֆինանսական տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև անձնական նպատակներով ընկերության գույքի օգտագործումը:

Շահերի բախում

ՍոբիԴրամ-ում արգելվում են բոլոր տեսակի շահերի բախման դեպքերը: Շահերի բախում կարող է առաջանալ, երբ առաջ են մղվում աշխատակցի անձնական շահերը, ինչպես նաև այն ժամանակ, երբ նրա որոշումները կարող են բացասաբար անդրադառնալ ընկերության շահերի վրա:

Շահերի բախումը կարող է արտահայտվել տարբեր ձևերով: Ստորև ներկայացված են նման իրավիճակների որոշ օրինակներ.

- ՍոբիԴրամ-ի աշխատողը այն ընկերության համասեփականատերն է, որը հանդիսանում է ՍոբիԴրամ-ի գործընկերը կամ մատակարարը:
- ՍոբիԴրամ-ի աշխատողը ընդունում է ՍոբիԴրամ-ի մատակարարի կողմից տրամադրվող արժեքավոր նվերներ կամ հրավերներ,
- ՍոբիԴրամ-ի աշխատողը ունի ընտանեկան բիզնես, որտեղ աշխատում է նրա ամուսինը/կինը, երեխան կամ մեկ այլ հարազատ (կամ դիմում է աշխատանքի համար) կամ որտեղ ապրանքներ կամ ծառայություններ են գնվում նրա հարազատից կամ այդ ընկերությունը վերահսկվում է նրա հարազատի կողմից:

Այս և նմանատիպ այլ իրավիճակներից պետք է խուսափել:

Անօրինական վճարումներ

ՍոբիԴրամ-ի Հակակոռուպցիոն քաղաքականությունը սահմանում է հակակոռուպցիոն օրենսդրության համապատասխանության պահանջները:

Օրենքով սահմանված կարգով արգելվում է ուղղակի կամ անուղղակի եղանակով պետական մարմիններին, քաղաքական կուսակցություններին կամ պաշտոնատար անձանց փոխանցել գումար կամ ցանկացած արժեքավոր իր, ինչպես նաև գումարի կամ փոխանցման թույլտվություն, առաջարկ կամ խոստում տալ կառավարության գործողությունների կամ պաշտոնական որոշումների վրա ազդեցություն գործելով որոշակի գործունեություն ծավալելու կամ անօրինական շահ ստանալու նպատակով:

Նվերներ, գործուղումներ և ժամանց

ՍոբիԴրամ-ում արգելվում է ընդունել արժեքավոր նվերներ կամ այլ գործնական հյուրընկալություն (ներառյալ զեղչեր և շահ, որոնք հասանելի չեն բոլոր աշխատակիցներին) ՍոբիԴրամ-ի հաճախորդից, մատակարարից, գործընկերից կամ մրցակցից: ՍոբիԴրամ-ի ոչ մի աշխատակից իրավունք չունի ստանալ անձնական ֆինանսական եկամուտ, նվերներ կամ ծառայություններ՝ ելնելով Ընկերությունում իր զբաղեցրած պաշտոնից կամ կատարած պարտականություններից: Բացառություն են կազմում ապրանքանիշով հուշանվերները (գրիչներ, օրացույցներ, օրագրեր, նոթատետրեր, բաժակներ):

ՍոբիԴրամ ՓԲԸ-ի աշխատակիցներին թույլատրվում է ժամանակ առ ժամանակ մասնակցել գործնական և ժամանցային միջոցառումներին երրորդ անձանց հրավերով: Այդպիսի միջոցառման մասնակցությունը պետք է տեղի ունենա հրավիրող կողմի ուղեկցությամբ, լինի պատշաճ, ունենա ողջամիտ արժեք և բովանդակություն: Ծանապարհորդության և գործուղման ծախսերը (եթե հրավերը Ընկերության աշխատակցի գտնվելու վայրից դուրս է) պետք է կատարի Ընկերությունը, այլ ոչ թե հրավիրող կողմը: Նման կանոնները կիրառվում են, եթե հրավիրող կողմը գործող գործընկեր է կամ գնումների մասնակից:

Գործնական վարքագիծ

Հարաբերությունները մատակարարների հետ

ՍոբիԴրամ-ի բոլոր մատակարարների հետ աշխատանքը պետք է կատարվի արդար մրցակցության պայմաններում: Մատակարարի որակավորումը, ապրանքատեսակները/ծառայությունները, հեղինակությունը մրցույթի կամ այլ խելամիտ միջոցներով պետք է ենթարկվի համապարփակ, անկախ, օբյեկտիվ և արդար դիտարկման՝ ՍոբիԴրամ-ի Գնումների մասին կազմակերպությունում գործող նորմերին համաձայն:

Մատակարարները պետք է՝

- ենթարկվեն օրենքներին և կանոնակարգերին՝ ուղղված ընդդեմ անբարեխիղճ մրցակցությանը կամ մենաշնորհի/կոռուպցիայի/կաշառքի:
- Չառաջարկեն կաշառք, կողմնակի վճարումների միջոցով զեղչեր և նյութական շահ:

Աշխատակիցները պետք է՝

- Առաջնորդվեն՝ ՍոբիԴրամ ընկերության մշակույթով և հարգեն մատակարարի

կորպորատիվ մշակույթը, վերաբերվեն մատակարարներին և իրենց ներկայացուցիչներին ընդունելի վարվելակարգով և գաղտնի պահեն մատակարարի կոնֆիդենցիալ տեղեկատվությունը՝ փոխադարձ համաձայնեցված և իրավաբանորեն կանոնակարգված եղանակով:

- Պաշտպանեն ընկերության իրավական շահերը, մերժեն կաշառքները, չթույլատրված կանխավճարների միջոցով զեղչերը կամ մատակարարի կողմից առաջարկված նյութական միջոցները:

Հարաբերությունները կարգավորող մարմինների հետ

Կարգավորող մարմինների հետ հարաբերություններում ՍոբիԴրամ-ի աշխատակիցները պետք է ուղղորդվեն կառավարության հակակոռուպցիոն կանոններով: Կարգավորող մարմնի աշխատակցին արգելվում է առաջարկել որևէ նյութական միջոց, որը կարող է ազդեցություն ունենալ նրան արդար մոտեցման վրա: ՍոբիԴրամ աշխատակիցներին արգելվում է կաշառել որևէ կարգավորող պաշտոնյայի (ուղղակի կամ անուղղակի եղանակով) ընկերության անունից:

Հարաբերությունները ՋԼՄ-ների հետ

ՍոբիԴրամ -ի Գլխավոր տնօրենը միակ անձն է, որ պատասխանատու է ապահովել տեղեկատվություն ՋԼՄ-ներին: Հաճախորդների քանակի, ընկերության եկամուտների, ներդրումների չափի և ընկերության գործունեության վերաբերյալ այլ տեղեկատվության տրամադրման վերաբերող հարցերը պետք է ուղղվեն Գլխավոր տնօրենին:

Ստավոր սեփականություն

Աշխատակիցը չպետք է տնօրինի, օգտագործի, տիրապետի կամ վերարտադրի որևէ արժեք, որը ճանաչվել է ընկերության մտավոր սեփականությունը առանց գլխավոր տնօրենի գրավոր թույլատվության: Ստավոր սեփականություն է համարվում յուրաքանչյուր ապրանք, որը պատկանում է ընկերությանը կամ արտադրվել ու ստեղծվել է ընկերության համար՝ ցանկացած տեքստ, նախագիծ, հաշվետվություն/զեկույց, ձեռնարկ, մեթոդ, ալգորիթմ, ծրագրային ապահովում, կոդ:

Գաղտնիության ռեժիմ

Մեր աշխատանքային միջավայրում կամ ամենօրյա աշխատանքի բնույթից ելնելով՝ ՍոբիԴրամ աշխատողները կարող են առնչվել ընկերությանը վերաբերող գաղտնի տեղեկությունների հետ՝ կապված հաճախորդների, մատակարարների, գործընկերների հետ: Ցանկացած նման տեղեկություն համարվում է ընկերության միանձնյա սեփականություն: Ընկերության աշխատողներից պահանջվում է լինել չափազանց ազնիվ և ապահովել «ՍոբիԴրամ» ՓԲ ընկերության գործունեության հետ կապված գաղտնի կամ անձնական տեղեկատվության գաղտնիությունը:

Աշխատողները պետք է հարգեն հաճախորդներին (այդ թվում մատակարարներ, գործընկեր կազմակերպություններ և աշխատակազմ) և նրանց վերաբերող

անձնական տեղեկությունները, և որպես պարտականություն պատշաճ ձևով ապահովեն անձնական տվյալների գաղտնիությունը: Աշխատակիցը կարող է օգտագործել ցանկացած գաղտնի տեղեկություն, որն ուղղակիորեն կապված է աշխատանքի հետ միայն այն նպատակներով, որոնք սահմանված են Ընկերության կողմից և իրավունք չունեք քննարկել այնպիսի տեղերում, որտեղ այն կարող է հասանելի դառնալ կողմնակի մարդկանց:

Ընկերությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն պատկանում է «ՄոբիԴրամ» ՓԲԸ-ին և արգելվում է դրա կիրառումը անձնական նպատակներով: ՄոբիԴրամ-ի աշխատակազմը պարտավոր է ենթարկվել ՀՀ օրենսդրության պահանջներին, որոնք վերաբերվում են կոմերցիոն գաղտնիքի պաշտպանությանը: